Հարգելի պարոն Նալբանդյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ (ուժի մեջ է մտել ս/թ հունվարի 1-ից) տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար։

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել

1.Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացվա՞ծ են արդյոք տեղեկություն ստանալու հարցումները. դրանք գրանցվո՞ւմ են արդյոք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:
2.Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման,ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան